ARABKIR MEDICAL CENTRE
Արաբկիր
ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԵՎ ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
INSTITUTE OF CHILD AND ADOLESCENT HEALTH
ՀՀ, ք. Երևան 0014, Մամիկոնյանց փ. 30, Հեռ.՝ (374 10) 236 883, Ֆաքս՝ (374 10) 284 170
30 Mamikoniants str., 0014 Yerevan, Armenia, Tel. (374 10) 236 883, Fax: (374 10) 284 170
E-mail: info@arabkirmc.am

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

«Արաբկիր» Բժշկական Համալիր –
Երեխաների և Դեռահասների
Առողջության Ինստիտուտի տնօրեն՝
_____Արման Բաբլոյան

25.03.2021թ.

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

Հայցորդ Արմինե Ասլանյանի «Առողջապահության կազմակերպում» 045 մասնագիտական խորհրդի պաշտպանությանը ներկայացրած «Երևան քաղաքի ավագ դպրոցներում սովորողների հոգեհուզական հիմնահարցերի եվ առողջական վիճակի հիգիենիկ բնութագիրը» բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի ատենախոսության վերաբերյալ:

1. Ատենախոսության թեմայի արդիականությունը, նորույթը, հիմնավորման աստիճանը

Երեխաների և դեռահասների առողջության բազմիցս շեշտվել է միջազգային հանրության կողմից, ինչպես նաև արտացոլվել Հայաստանում առողջապահության ոլորտի ընդունված ռազմավարական փաստաթղթերում: Մասնավորապես, 2016 թ. ընդունված “Երեխաների և դեռահասների առողջության և զարգացման” ռազմավարությունում մատնանշվել են Հայաստանում ոլորտում առկա խնդիրները, դրանց լուծմանն ուղված քայլերը: Ինչպես և ամբողջ աշխարհում, նշված խնդիրների շարքում իր ուրույն տեղն է գրավում դպրոցահասկանների և դեռահասների առողջությունը: Ներկայումս կասկած չի հարուցում այդ խնդիրների մեծ հանրային առողջապահական նշանակությունը, դրանց ազդեցությունը

այնպիսի գլոբալ խնդիրների վրա, ինչպիսին է բնակչության շրջանում ոչ վարակիչ հիվանդությունների լայն տարածվածությունը: Ինչպես ցույց է տրվել Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից, դեռահասների առողջական վիճակը, այդ տարիքում ձևավորված առողջական վարքագիծը մեծապես ազդում են յուրաքանչյուր անձի և հանրության առողջական ցուցանիշների վրա, մասնավորապես պայմանավորում վաղաժամ մայացության երկու երրորդը: Ի լրումն ֆիզիկական առողջության խնդիրների, կարևորվում են նաև հոգեկան առողջության խնդիրները: Նախկինում կատարված գիտական աշխատանքները, ներառյալ "Արաբկիր" Բժշկական համալիր – Երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտի անձնակազմի կողմից իրականացված լայնածավալ հետազոտությունները, փաստել են, որ ինչպես ամբողջ աշխարհում, նման խնդիրներ առկա են նաև Հայաստանում:

Հաշվի առնելով վերահիշյալ, Արմինե Ասլանյանի ատենախոսության մեջ արծարծված խնդիրներն արդիական են: Աշխատանքի կարևոր նորույթներից է դպրոցականների հոգեկան, ֆիզիկական և աղջիկների մասով վերարտրադողական առողջության խնդիրների համեմատական և համալիր վերլուծությունը:

2. Ատենախոսության բովանդակության ձևավորման գնահատականը:

Ատենախոսությունը շարադրված է հայերեն լեզվով, ծավալը կազմում է 198 էջ, ինչը համապատասխանում և նույնիսկ գերազանցում թեկնածուական աշխատանքերին ներկայացված պահանջները: Այն կառուցված է դասական եղանակով, ներառում է ներածություն, հինգ գլուխ՝ գրականության տեսություն, հետազոտության նյութ և մեթոդները, հետազոտության արդյունները, սեփական ամփոփում, եզրակացություն, գործնական առաջարկներ, գրականության ցանկ, հավելվածներ: Այսպիսով, ատենախոսության ձևավորումը համապատասխանում է առկա պահանջներին:

3. Ատենախոսության արդյունքների նշանակությունը գիտության և արտադրության ոլորտում, դրանց օգտագործման հնարավորությունները:

Հաշվի առնելով խնդրի արդիականությունը, հետազոտության մեջ կիրառված եղանակների հավաստի բնույթը, ատենախոսության արդյունքում բացահայտվել են խնդրին առնչվող առանձնահատկություններ, ինչն ունի կարևոր գիտական նշանակություն:

Ներկայացված են նաև ՀՀ առողջապահության և կրթության ոլորտներում երեխաների առողջության բարելավմանն ուղղված որոշ առաջարկներ, որոնք արժանի են հետագա քննարկման:

4. **Սեղմագրի համապատասխանությունը ատենախոսության հիմնական դրույթներին**

Սեղմագիրը ներկայացված է 21 էջի վրա և արտացոլում է պաշտպանությանը ներկայացված ատենախոսության հիմնական դրույթները, ինչպես նաև համապատասխան առկա պահանջների ներառում է սեղմագիր ռուսերեն և անգլերեն լեզուներով:

Եզրակացություն

Արմինե Հրաչիկի Ասլանյանի «Առողջապահության կազմակերպում» 045 մասնագիտական խորհդի պաշտպանությանը ներկայացրած «Երևան քաղաքի ավագ դպրոցներում սովորողների հոգեհուզական հիմնահարցերի եվ առողջական վիճակի հիգիենիկ բնութագիրը» բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի ատենախոսությաունը առաջադրված խնդիրների սահմաններում լիարժեք իրականացված և ինքնուրույն հետազոտությունների արդյունք հանդիսացող գիտական աշխատանք է: Այն իր արդիականությամբ, նորույթով, տեսական ու գործնական նշանակությամբ լիովին համապատասխանում է թեկնածուական ատենախոսությունների համար ՀՀ ԲՈԿ-ի կողմից սահմանած պահանջներին, իսկ հեղինակը արժանի է բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի:

«Արաբկիր» ԲՀ-ԵԴԱԻ Երեխաների և դեռահասների
առողջության ինստիտուտի ղեկավար՝ Սերգեյ Սարգսյան

«Արաբկիր» ԲՀ-ԵԴԱԻ բժշկական տնօրեն, գիտքարտուղար՝ Նինա Արիկյանց

«Արաբկիր» ԲՀ-ԵԴԱԻ տնօրեն՝ Արման Բաբլոյան